

На основе сопоставления исторических источников и результатов исследования на месте описывается одна из известных крепостей Хачена, которая оставила значительный след в истории Арцаха. Вместе с краткой историей крепости и описанием основных строений комплекса, показаны роль и значение этого единственного в своем роде оборонительного узла в нижней долине реки Тартар.

THE FORTRESS “JRABERD”.

Slava Sargsyan

Summary

Based on the comparison of historic sources and research results on the spot one of the most famous fortresses of Khachen is described which left a significant mark in the history of Artsakh. Together with the brief history of the fortress and the description of the main buildings of the complex, the role and importance of this unique defensive unit in the lower valley of Tartar are shown.

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՌԻՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ՝ ԳԼԱՋՈՐԻ ԵՎ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՈ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ռոնա Բալայան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրդՀ

Հայ ժողովրդի դարավոր պատմության ընթացքում կրթական օջախների առավելապես համալսարանների հիմնադրումը կարևոր մշակակություն են ունեցել երկրի տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի զարգացման գործում:

XII–XIV դարերի միջնադարյան Հայաստանի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունները բեղմնավոր գործունեություն են ծավալել հայ դպրության, մշակույթի և ավանդույթների անադարտ պահպանման համար:

XIII դարի 20-ական թվականներից սկսած մոնղոլական արշավանքները լրջորեն խոչընդոտել են Հայաստանի հասարակական մտքի զարգացմանը: Սակայն ազգային մշակույթի արժեքները շարունակել են գերակայող դեր կատարել ազգի հոգևոր կյանքում: Այդ արժեքները հարստացել ու պահպանվել են ամենից առաջ կրթօջախներում:

Մոնղոլների ավերածություններից զերծ է մնացել պատմական Սյունիքը, որտեղ և համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծվել

Սյունիքի Օրբելյան և Խաղբակյան տոհմերի իշխանների ազգանպաստ ձեռնարկումների համար: Նրանց ուշադրության կենտրոնում է գտնվել հայ ժողովրդի մշակութային-մտավոր պահանջների բավարարումը: Ստեղծագործական մտքի նոր կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը առնչվում էր նաև հայ եկեղեցու շահերի հետ, ունիթորության դեմ վճռական պայքարի գործում:

Բարձր կարգի դպրոցներ են հիմնադրվել Անիում, Հաղպատում, Սանահինում, Գլաձորում, Տաթևում և այլուր:

Մեծ Հայքի Սյունիքի նահանգի Վայոց ձոր գավառում Թանադե վանքում, Խաղբակյան Պռոշ իշխանի նախաձեռնությամբ և Օրբելյան իշխանական տան աջակցությամբ հայ մտավոր կյանքի գլխավոր կենտրոններից մեկն է դարձել Գլաձորի համալսարանը: Այն տարբերվել է Միջնադարյան Հայաստանում եղած մյուս ուսումնա-կրթական օջախներից իր կայացման մակարդակով, հասարակական-քաղաքական կյանքում կատարած դերով և ստեղծած բարձրարվեստ գործերով:

Համալսարանում ձևավորված գիտնականների տաղանդավոր սերունդը հայ ժողովրդի համար փորձության տարիներին կարողացել է կորստից փրկել նախնյաց ժառանգությունը, ազգային արժեքները և փոխանցել հաջորդ սերունդներին:

1282թ. գարնանը Վայոց ձոր են տեղափոխվել քրդերի հարձակումներից Քաջբերունիքում ապաստանած Մշո Ս.Առաքելոց վանքի ուսումնականները ռաբունապետ Ներսես Մշեցու գլխավորությամբ: Պռոշյանները տրամադրել են նրանց Գլաձորի վանքը (նույնացվում է Թանադե վանքի հետ): Ներսես Մշեցին ձեռնամուխ է եղել Գլաձորի համալսարանի կազմավորմանը, ձեռնարկել է նյութական պայմանների ստեղծման, աշակերտների ընտրության, դասախոսների կազմի համալրման, ծրագրերի, ձեռնարկների ստեղծման գործընթացը: Նրա ձեռնարկումներին աջակցել են Սյունյանց թեմական իշխանությունները: Համալսարանը գտնվել է շրջահայաց ու հեռատես սյունեցիների ուշադրության կենտրոնում, օգնում էին նյութական միջոցներով, հպարտանում՝ համալսարանի իմաստասեր գիտնականներով, սիրում ու պաշտում էին սեփական ազգային բարձրագույն կրթական օջախը: Դա երևում է համալսարանի շրջանավարտ ուսանողների ավարտական ատենախոսություններից: Դրանցից մեկում շրջանավարտը իր ուսուցչին

համեմատում է «հոգևոր հացի սեղանի» հետ, որից նա առատորեն բաշխում էր բոլորին: ¹

Սյունիքի Վայոց ձոր գավառում բարձրագույն դպրոցի կազմակերպումը ունեցել է իր նախադրյալները: Հայոց գրերի գյուտը հզոր մշակութային վերելք է առաջ բերել Հայաստանում, այդ թվում՝ Սյունիքում, Արցախում և Ուտիքում: V դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը իր մի խումբ աշակերտների հետ մեկնել է Արցախ, քարոզել է քրիստոնեությունը, աջակցել կրթական գործի և գրավոր մշակույթի զարգացմանը: Իրենց ստեղծագործություններով անմահացել են պատմության, փիլիսոփայության, մաթեմատիկայի, տոմարագիտության, տիեզերագիտության և այլ ոլորտներում այնպիսի տաղանդավոր մտածողներ, ինչպիսիք են Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին և ուրիշներ:

Գլաձորի համալսարանը հիմնվել էր Սյունիքի կրթության և դպրոցական գործի հին ավանդույթների, ազգային հարուստ ժառանգության հիմքերի վրա:

Համալսարանում գործում էր ներքին կանոնադրություն, կար ուսումնագիտական աստիճանավորում: Ուսումնական ծրագրերում առաջնակարգ տեղ էին հատկացնում աստվածաբանության, փիլիսոփայության, քերականության, ճարտարապետության, աստղագիտության, թվաբանության, երկրաչափության, երաժշտության դասավանդմանը, ուսումնասիրում էին անտիկ և վաղ քրիստոնեական շրջանի մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Դավիթ Անհաղթի, Մովսես Քերթոզի, Ներսես Շնորհալու, Վահրամ Ռաբունու և այլոց փիլիսոփայական-հասարակագիտական հայացքներն ու տեսությունները:

Ուսումնական ծրագրերում լայն տեղ է տրվել ազգի պատմությանը: Դասավանդվել են Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու ստեղծագործությունները: Ուսանողները պարտավոր էին ուսումնասիրել նաև հունական, հռոմեական և ասորական դպրության աշխատություններ:

Համալսարանում ուսումնասիրվող առարկաների համակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվել տիեզերագիտությանը: Առարկայի ուսումնասիրությունը անհրաժեշտ էր նաև քրիստոնեական տոների ճիշտ

¹ Աբրահամյան Ա., Գլաձորի համալսարանը, Երևան, 1983, էջ 22:

հաշվարկումների համար: Վերոհիշյալ առարկայի համար հարուստ աղբյուր է ծառայել հայ ականավոր տիեզերագետ Հովհաննես Երզնկացու «Յադագս երկնային շարժման» մասին աշխատությունը, որտեղ մեկնաբանվել են տեղեկություններ՝ աստղագիտության և տոմարագիտության վերաբերյալ: Ճշգրիտ գիտություններից առավելագույնը տրվել է մաթեմատիկային: Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքն ու խնդրագիրքը ծառայել են որպես դասագրքեր: Ուսանողները մեծ հետաքրքրություն են հանդես բերել Շիրակացու «Մղոնաչափք», «Օդաչափք», «Աշխարհացույց» և այլ աշխատությունների նկատմամբ: Բարձր դրվածքի վրա է գտնվել նաև երաժշտության և մանրանկարչության դասավանդումը: Արվեստի հետ անխզելիորեն կապված է եղել քերականությունը: Որպես քերականության դասագրքեր օգտագործվել են Մովսես Քերթովի (Վդ.), Գրիգոր Մագիստրոսի (Մղ.) գրքերը:

Գլածորի համալսարանն իր ուսումնական ծրագրերով, դասավանդվող առարկաների դրվածքով ու բազմազանությամբ չի տարբերվել միջնադարյան եվրոպական համալսարաններից, նույնիսկ չի զիջել ամենահեղինակավոր գիտական մտքի կենտրոններից մեկին՝ Փարիզին:

Գլածորի և եվրոպական համալսարանների ուսումնական ծրագրերում եղած ընդհանրությունները օրինաչափ են, քանի որ դրանք առնչվում են քրիստոնեական ուսումնական ավանդույթի հետ: Բայց եվրոպական համալսարանները կազմակերպվել են այն ժամանակ, երբ այդ երկրները թևակոխել էին վերածննդի դարաշրջանը, իսկ Հայաստանը գտնվում էր օտար կեղեքիչների լծի տակ: Հայաստանում ուսուցումը տարվում էր մայրենի լեզվով, իսկ եվրոպական համալսարաններում՝ լատիներենով:

Գլածորի համալսարանը նշանավոր ազգային-եկեղեցական, գիտական հայրենասիրական կենտրոն էր, որը պատրաստում էր գիտությամբ զբաղվող անհատներ, կյանքի տարբեր բնագավառների մասնագետներ՝ գիտական աստիճաններով ու կոչումներով:

Ուսումնագիտական այս կենտրոնում լայն աշխատանք են ծավալել Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Թորոս Տարոնացին, Մխիթար Սասնեցին, Վարդան Կիլիկեցին, Դավիթ Սասնեցին և ուրիշներ: Ուսումնառության տևողությունը եղել է 7-8 տարի: Իր կրթական, մշակութային և գիտական գործունեության ընթացքում անգնահատելի է

համալսարանի ավանդը գիտության, մշակույթի, հասարակական կյանքի մյուս բնագավառներում: Այդ կենտրոնում գործող ռաբունիններն ու ռաբունապետերը ժամանակի կրթված, բարձրագույն կրթական գործի գիտակ, ջանասիրությամբ աշխատող մանկավարժ-գիտնականներ էին: Պատահական չէ, որ Գլաձորի համալսարանը ծեռք բերած վաստակի համար կոչվում էր «Երկրորդ Աթենք», «Գերահռչակ համալսարան» անվանումներով:

Ներսես Մշեցու մահից հետո Գլաձորի համալսարանի ռաբունապետությունը ստանձնել է նրա շնորհաշատ աշակերտ Եսայի Նչեցին: Նա ծնվել է Սասունի Նիչ ավանում: Բարձրագույն կրթություն ստացել է Գլաձորի համալսարանում: Նրա ուսուցչապետության շրջանում (1284-1338թթ.) համալսարանի փառքը տարածվել է ամենուրեք: Նրան աշակերտել են բազմաթիվ ուսանողներ, որոնք խոր մեծարանքով են գնահատել մեծ գիտնականի վաստակը, տալով նրան «Տիեզերալույս ռաբունապետ», «Քաջահանձար փիլիսոփա», «Սուրբ և Մեծ վարդապետ» տիտղոսները: Հայտնի են մեծ մտածողի աստվածաբանական-դավանաբանական, փիլիսոփայական և քերականական բնույթի աշխատությունները: Նրա արժեքավոր ուսումնասիրություններից է «Մեկնություն մարգարեության Եզեկիելի», որը գրել է Սյունիքի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Օրբելյանի առաջարկով: Եսայի Նչեցին կազմել է նաև քերականության դասագիրք, անդրադարձել է լեզուների ծագման, հոլովման և քերականական այլ հիմնահարցերի վերլուծություններին: Դավանաբանական աշխատություններում հեղինակի ուշադրության կենտրոնում են գտնվել գաղափարական անողոք պայքարը միարարական շարժման դեմ՝ հանուն ազգային ավանդույթների պահպանման:

Գլաձորի համալսարանը ազգային մտածելակերպի ակտիվ դիրքորոշում է ընդունել ունիթորության դեմ պայքարում: Ինչպես ընդգծում է Հ. Մանանդյանը, Մոնղոլների տիրապետության ժամանակ ունիթորական կամ միարարական շարժման միջոցով Վատիկանը նպատակ էր հետապնդում դավանափոխ անել հայ ժողովրդին և հայոց եկեղեցին ենթարկել պապական իշխանությանը:¹ Դավանափոխության քաղաքականությունը իրագործելու նպատակով, ունիթորները գործում էին թե՛ բանավոր քարոզությամբ, թե՛ գրավոր: Նրանք Արևմուտքի սխոլաստիկական

¹ Մանանդյան Հ. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.գ., Երեւան, 1952, էջ 342:

գրականությունը, կաթոլիկ ոգով գրված գրքերը, քարոզները տարածում էին Հայաստանում:¹ Ուստի անհրաժեշտություն էր դարձել պայքարը ունիթորության, դավանափոխության պապական ծրագրի դեմ, որը հայ ժողովրդի համար ծուլման վտանգ էր դառնում: Պայքար տարվում էր նաև երկրի ներսում լատինամետ տարրերի դեմ: Կաթոլիկ եկեղեցուն հարելու հակում են ունեցել ինչպես Կիլիկիայում, այնպես էլ բուն Հայաստանում, գլխավորապես, հասարակության բարձր խավերը:²

Հայ ժողովրդի ավանդույթների պաշտպանությամբ բանավիճական բնույթի աշխատություններով հանդես եկավ Եսայի Նչեցին: Նա գրել ու տարածել է ժողովրդի մեջ շրջաբերականներ, որտեղ արտահայտել է իր ազգայնամպաստ ակտիվ դիրքորոշումը ունիթորության դեմ պայքարում:

1307թ. Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում Կոստանդին III Կեսարացի կաթողիկոսը Վատիկանի պահանջով դավանափոխության պապական ծրագիրն օրինականացնելու նպատակով հրավիրել էր ազգային եկեղեցական ժողով Կիլիկիայի հոգևորականության ներկայացուցիչների և արքունի մի քանի իշխանների մասնակցությամբ: Ժողովին ներկա է եղել նաև Լևոն IV թագավորը (1301-1308): Դավանափոխության պապական ծրագիրն կողմնակից էին Կիլիկիայի հայոց արքունիքն և կաթողիկոսությունը, որոնց ճնշման տակ ժողովը ընդունել է որոշում հայ ժողովրդին հավատափոխ անելու մասին: Սակայն ժողովի որոշումը ի կատար ածել չի հաջողվել:

1316թ. Կիլիկիայի Ադանա քաղաքում լատինամետ կաթողիկոսը Հովհաննես 22-րդ պապի հանձնարարությամբ կրկին հրավիրում է ժողով դավանափոխության հարցով ժողովին մասնակցել են 17 եպիսկոպոս՝ հիմնականում Կիլիկիայից: Ներկա էր նաև Օշին թագավորը (1308-1320): Ժողովը ընդունել է 2 եկեղեցիների միավորման մասին որոշում, որը դարձյալ մնացել է անկատար:

Գլաձորի համալսարանը ամենայն վճռականությամբ շարունակել է պայքարը ունիթորների դեմ: Սսի ժողովի որոշումը հայտնի դառնալուց հետո Սյունյանց հոգևոր առաջնորդ Հովհան Օրբելը, նրա եղբայրը՝ Ստեփանոս Տարսայիձը, Եսայի Նչեցին, Դավիթ Սասնեցին իրենց ստորագրությամբ բողոքագիր են ուղարկել լատինամետ Կոստանդին Կեսարացի կաթողիկոսին, դատապարտել են նրա որդեգրած դավանափոխու-

¹ Նույն տեղում, էջ 339:

² Աբրահամյան Ա. Գլաձորի համալսարան, Երեւան, 1983, էջ 35-36:

թյան գիծը: Նույն վճռականությամբ գլածորցիները անողոքաբար քննադատության են ենթարկել Հակոբ II Անավարզեցի կաթողիկոսի, թագավորի և նրանց հետևորդների անհեռատես ձեռնարկումները¹:

Գլածորի ռաբունապետ Եսայի Նչեցու և Գրիգոր Տաթևացու աշխատություններում տեղ են գտել հասարակական-քաղաքական և մանկավարժական բնույթի հիմնախնդիրներ, որոնց հանդեպ յուրովի մոտեցում են դրսևորել համալսարանի ուսումնականները: Ընդունելով իշխանավորների անխախտ իրավունքները, համալսարանականները միևնույն ժամանակ պահանջում էին, որ նրանք խորհրդականներ ունենան և առաջնորդվեն նրանց խորհրդով: Հասարակության խավերի համակարգում նրանք կարևորում էին գյուղացիության դերը, առանց որի պետությունը չի հարատևի: Կարևորում էին նաև արհեստավորների գործունեությունը: Բացասական կարծիք ունեյին առևտրականների մասին, որոնք ըստ նրանց, հասարակության մեջ ամենից ագահ մարդիկ են, որքան հարստանում են, ցանկանում են էլ ավելի հարստանալ:

Ուսումնառության բնագավառում առաջնակարգ դերը հատկացրել են մանկավարժին, որին դասել են սրբերի և առաքյալների շարքը: Նրանք առաջնորդվել են Պլատոնի՝ «Ուսուցիչ եմ կոչում ոչ թե նրան, որը բազում բաներ գիտի, այլ նրան, որը մաքուր վարք ունի» սկզբունքով: Ուսուցչից պահանջվել է, որ նա կատարելապես տիրապետի իր դասավանդած առարկային. «Նախ ինքը ուսաց պետք է լինի, ապա ուրիշին սովորեցնի». «Մեկը, որ քիչ բան գիտի, ուրիշին ոչինչ տալ չի կարող»²:

Գլածորի ուսումնականները քննադատել են իրենց ապրած ժամանակներում տարածում գտած հասարակական մի շարք բացասական երևույթներ՝ ավազակությունը, գողությունը, շողոքորթությունը, քծնանքը, զրպարտությունը, չարախոսությունը: Ծանր հանցանք է համարվել հատկապես անբարոյականությունը:

Նրանք քննադատում էին այն մեծատուն հարուստներին, որոնք արհամարհում էին աղքատներին և աշխատում նրանց հեռու պահել իրենցից:

Գլածորի համալսարանն ունեցել է համահայկական նշանակություն և հռչակ: Այստեղ սովորելու են եկել Կիլիկիայից, հայկական գաղթա-

¹ Մանանդյան Հ., Նշվ. աշխ., էջ 340:

² <http://plato.spbu.ru/TEXTS/PLATO/new/Platon2pdf>.

վայրերից, Հայաստանի տարբեր շրջաններից և քաղաքներից, Տարոնից, Շիրակից, Արցախից, Այրարատից, Գուգարքից, Երզնկայից, Նախիջևանից և այլ վայրերից:

Գլաձորի համալսարանի ավանդույթները շարունակվել են Սյունիքում ստեղծված հայ դպրության և մշակույթի նոր կենտրոնում՝ Տաթևի համալսարանում, որի հիմնադիրն էր Գլաձորում համալսարանական կրթություն ստացած Հովհան Որոտնեցին:¹

Վերջինս եռանդուն գիտամանկավարժական գործունեություն է ծավալել, բարեփոխել է ուսումնական ծրագրերն ու կանոնակարգը, մեծ վաստակ է ներդրել փիլիսոփայական և աստվածաբանական գիտությունների բնագավառում: Իր քարոզներում խիստ կշտամբել է ունիթորների արարքներն ու վարդապետությունը:

Սյունիքի հասարակական-քաղաքական կյանքին իր ակտիվ մասնակցությամբ Որոտնեցին նպաստել է հայրենի կրթագիտական օջախների պահպանմանն ու բարգավաճմանը, իզուր չէ, որ ժամանակակիցները մեծաբել են նրան «Եռամեծ փիլիսոփա» կոչումով:

Նրա բեղմնավոր գործունեությունը շարունակել է Գրիգոր Տաթևացին՝ Որոտնեցու ամենատաղանդավոր սանն ու նրա գործի արժանի հաջորդը: Վերջինս գրել է բազմաթիվ մեծածավալ աշխատություններ, մեկնություններ հունական փիլիսոփաների երկերի վերաբերյալ: Հայտնի է նրա «Հարցման գիրքը», «Քարոզգիրքը», որոնցում տրվել են արժեքավոր տեղեկություններ ժամանակաշրջանի հայ իրականության մասին:

Գրիգոր Տաթևացին խոր ու կայուն գիտելիքներ է ձեռք բերել ոչ միայն Հին ու Նոր Կտակարանների և կրոնական բնույթի այլ երկերի իմացության ոլորտում, այլև ուսումնասիրել էր իմաստասիրական և աշխարհիկ գիտություններ, որոնցով գինված նա մեծ հմտությամբ պայքար էր մղում ունիթորական շարժման դեմ:² Նա կարևորել է բնության օրինաչափությունների իմացությունը, ընդունել մարդուց անկախ օբյեկտիվ աշխարհի գոյությունն ու ճանաչելիությունը: Հայրենասեր գիտնականը հստակ գիտակցում էր, որ հայ ժողովրդի համար ստեղծված ոչ բարվոք պատմական պայմաններում, օտար բռնակալներին դիմակայելու գրեթե միակ միջոցը ազգային արժեքների պահպանումն ու զարգացումն է:

¹ Մանանդյան Հ., Նշվ. աշխ., էջ 341:

² Նույն տեղում:

Գրիգոր Տաթևացին մեծարվել է «հանրագիտակ գիտնական», «վարժ մանկավարժ», «շնորհալի նկարիչ» և այլ պատվանուններով:

Միջնադարյան Հայաստանում ստեղծված հայ դպրության և մշակույթի բարձրագույն կրթության կենտրոնները անգնահատելի գիտական ժառանգություն են թողել հայոց պատմության մեջ: Գլաձորի, Տաթևի և այլ համալսարաններում գործող տաղանդավոր մտավորականության գործունեության շնորհիվ այդ փառավոր կրթօջախները դարձել են ժամանակի խոշորագույն գիտամշակութային կենտրոններ, որտեղ ձեռք են բերվել համաշխարհային չափանիշի գիտական նվաճումներ:

Ունենալով ազգային-հասարակական հսկայական կշիռ՝ այդ բարձրագույն կրթօջախները օտար բռնակալների տիրապետության ժամը շրջանում հալածանքների են ենթարկվել, նույնիսկ հարկադրված թափառական կյանք են վարել, բայց երբեք չեն արատավորել իրենց անունները, շարունակել են ազնվորեն ծառայել ժողովրդին՝ հավատարիմ մնալով հայոց հավատքին և ավանդույթներին:

РОЛЬ ВОСТОЧНО- АРМЯНСКИХ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫХ
ЦЕНТРОВ -УНИВЕРСИТЕТОВ ГЛАДЗОРА И ТАТЕВА, В ДЕЛЕ
РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ОБЩЕСТВЕННОЙ МЫСЛИ

Рона Балаян
Резюме

В статье рассматривается роль Гладзорского и Татевского университетов в деле развития армянской интеллектуальной и общественно-политической мысли.

Особое внимание автор обращает на деятельность видных ученых этих образовательных центров, направленных против вероотступничества во имя сохранения национальных традиций.

THE ROLE OF THE EASTERN ARMENIAN ACADEMIC CENTRES OF
GLADZOR AND TATEV UNIVERSITIES IN THE DEVELOPMENT OF
ARMENIAN PUBLIC THOUGHT.

Rona Balayan
Summary

The given article examines the role of Gladzor and Tatev Universities in the development of Armenian Intellectual and sociopolitical way of thinking.

The author pays special attention to the activities of the prominent scientists of these educational centres against apostasy in the name of retaining national traditions.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Վահրամ Բալայան

*Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ԱրդՀ*

Այսրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո ցարիզմը ձեռնամուխ եղավ նաև նրա տնտեսական յուրացմանը: Ցարական կառավարությունը ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա:

Դրան հասնելու համար ցարական կառավարությունը իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ սկսեցին աշխուժացնել տնտեսական կյանքը: Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում խանը Ղարաբաղից, որոնք հետագայում պետք է մտնեին պետական գանձարան: Այդ նպատակով 1822-23թթ. երկրամասում անցկացվեց աշխարհագիր, ցուցակագրվեցին բոլոր բնակավայրերը, ընտանիքի անդամները, հավաքվելիք հնարավոր տուրքերի չափը¹:

Նոր գրավված տարածքների տնտեսական հնարավորությունները օգտագործելու համար 1836թ. ստեղծվեց «Կովկասյան արդյունաբերական ընկերություն»²:

1861թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, 19-րդ դարի 60–70-ական թվականներին ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերում անցկացրեց նաև գյուղացիական բարեփոխումներ:

Արևելյան Հայաստանում, այդ թվում նաև Ղարաբաղում, գյուղացիական բարեփոխումը անցկացվեց 1870 թ. մայիսի 14-ի օրենքով: Նոր օրենքով վերացվեց հողերի օգտագործման համայնական եղանակը և

¹ Լիսիցյան Ստ., *Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 50*:

² *Обозрение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, Топографическом и финансовом отношении*”, Москва, 1836, ч. I, стр. 63.